«Ա–ԹԻՎԻ» ՍՊԸ

Ք. Երևան 03 նոյեմբերի 2020թ.

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 06-Լ

«Ա–ԹԻՎԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ա-ԹԻՎԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սովորութային ուժով կիրառվել և մշտապես պահպանվել են իր գործունեության ընթացքում ձևավորված՝ մասնագիտական էթիկայի այնպիսի կանոններ, որոնք ընդունելի են նաև աշխարհի լավագույն հեռուստաընկերությունների կողմից,

Կարևորելով սեփական՝ միասնական փաստաթղթի ներքո էթիկայի կանոններ ունենալու անհրաժեշտությունը,

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի պահանջով,

Հիմք ընդունելով Ընկերության Կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Ընկերության էթիկայի կանոնագիրը (այսուհետ՝ Էթիկայի կանոնագիր) (Հավելված 1):
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2021թ.-ի հունվարի 1-ից:

Գլխավոր տնօրեն՝ _____ Ռուբեն Արամյան

Հասցե՝
ՀՀ, քաղաք Երևան 0054, Եղվարդի խճուղի 1
Լիցենզիա N 166
հեռ. (+37460) 445 238
էլ. փոստ info@atv.am
www.atv.am

Address:
1 Yeghvard Highway, Yerevan, 0054, RA
License N 166
tel. (+37460) 445 238
email info@atv.am
www.atv.am

Հավելված 1
«Ա–ԹԻՎԻ» ՍՊԸ-ի
գլխավոր տնօրենի՝
2020թ.-ի նոյեմբերի 3-ի
Թիվ 06-Լ հրամանի

Էթիկայի կանոնագիր

ՆԱԽԱԲԱՆ

«Ա–ԹԻՎԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Հեռարձակող) համար առանցքային նշանակություն ունի իր՝ որպես վստահելի հեռուստաընկերության վարկի պահպանումը, ինչը սերտորեն կապված է վերջինիս կողմից էթիկական նորմերին հետևելու հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էթիկայի կանոնագիրը նշված նորմերը լոկ տեխնիկապես ամբողջացնող փաստաթուղթ չէ, այլև հիմք է հեռուստաընկերություն-հեռուստադիտող վստահելի կապի, հեռուստատեսային գործունեության համար անհրաժեշտ և բարենպաստ մթնոլորտի ձևավորման, Հայաստանի Հանրապետության ներսում՝ հեռուստատեսության ոլորտում գործող միջազգային ճանաչում ստացած չափորոշիչները կյանքի կոչելու և հեռուստատեսության ոլորտի զարգացման ճիշտ ուղին ապահովելու համար,

Ղեկավարվելով հեռուստալսարանի առջև պատասխանատվություն կրելու անհրաժեշտությամբ՝

Կազմվեց սույն էթիկայի կանոնագիրը /այսուհետ՝ Կանոնագիր/:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կանոնագիրը նախատեսում է այն սկզբունքները, որոնք պետք է հարգվեն և պահպանվեն Հեռարձակողի թե՛ սեփական և թե՛ վերջինիս պատվերով ստեղծված տեսալսողական հաղորդումներում:

II. ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԵԹԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հեռարձակողի կողմից որդեգրված եթերային քաղաքականությունը հիմնվում է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

1) բարեխղճության սկզբունք,
2) տեղեկատվության ճշգրտություն և ազնվություն,
3) անկողմնակալ և հավասարակշիռ վերաբերմունք,
4) հարգանք մարդու մասնավոր կյանքի նկատմամբ,
5) հարգանք հասարակական շահերի նկատմամբ,
6) հարգանք համընդհանուր արժեքների և մշակութային բազմազանության նկատմամբ:

1. Բարեխղճության սկզբունք

Հեռարձակողի առաջնային նպատակն է երաշխավորել իրական և հավաստի տեղեկատվության տրամադրումը իր հեռուստալսարանին՝ օբյեկտիվ իրականությունն արտացոլելով: Հեռարձակողը փաստերը շարադրում է բարեխղճորեն, այն է՝ պահպանում է փաստերի իրական իմատը և նշանակությունը, բացահայտում է կարևորագույն կապերը և զերծ մնում ցանկացած խեղաթյուրումներից:

Հեռարձակողը ձեռնարկում է բոլոր հնարավոր տեխնիկական, ստեղծագործական և նյութական միջոցները՝ նպաստելով տեղեկատվության առավելագույն ճիշտ ընկալմանը հեռուստադիտողի կողմից:

2. Տեղեկատվության ճշգրտություն և ազնվություն.

Ճշգրտությունն ապահովելու համար Հեռարձակողը պետք է ստուգի և վերստուգի փաստական տվյալները, պետք է աշխատի տեղեկությունները ստանալ սկզբնաղբյուրից: Հաղորդումներում պարունակվող սխալ տեղեկությունները պետք է ուղղվեն հնարավորին չափարագ, որպեսզի Հեռարձակողը պահպանի վստահելի հեռուստաընկերության վարկը:

Հեռարձակողը պետք է ներկայացնի իրականության օբյեկտիվ պատկերը ճշգրիտ և իր ընկալմամբ առավելապես սպառիչ տեղեկությունների միջոցով: Հեռարձակողը պետք է հնարավորին չափ հստակ սահմանազատել փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը կարծիքներից, վերլուծություններից եւ մեկնաբանություններից:

Հեռարձակողի ազնիվ վերաբերմունքը իր հեռուստադիտողի նկատմամբ պետք է թույլ չտա, որպեզի իր եթերում որևէ մասնավոր շահի քարոզչություն:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «Ա-ԹԻՎԻ» ՍՊԱՌԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ «А-ТИВИ»
LIMITED LIABILITY COMPANY «A-TV» YEREVAN
ԵՐԵՎԱՆ
ЕРЕВАН

3. Անկողմնակալ և հավասարակշիռ վերաբերմունք

Անկողմնակալությունը Հեռարձակողի համար հիմնարար արժեք է, որը պետք է արտահայտվի և լրատվական, և այլ թեմատիկ ուղղվածության բոլոր հաղորդումներում: Իրադարձությունը կամ երևույթն ունի առնվազն երկու կողմ, որոնք պետք է բացահայտել անկողմնակալ, և որոնք պետք է ներկայացնել հնարավորինս ճշգրիտ ու հստակ:

4. Հարգանք մարդու մասնավոր կյանքի նկատմամբ

Հեռարձակողը հարգում է մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Հեռարձակողի գործունեության հիմնաքարերից մեկն այն է, որ մարդու անձնական աշխարհի անձեռնմխելիության երաշխիքների պահպանումը հասարակության գոյության և զարգացման կարևորագույն պայմաններից է:

5. Հարգանք հասարակական շահերի նկատմամբ

Հասարակության շահերի, վերջինիս ժողովրդավարական ինստիտուտների և հասարակության կողմից ընդունված բարոյական նորմերի նկատմամբ հարգանքը Հեռարձակողի գործունեությունն ուղենշող սկզբունքներից է:

6. Հարգանք համընդհանուր արժեքների և մշակութային բազմազանության նկատմամբ

Հեռարձակողը իր գործունեությունն իրականացնելիս պետք է հարգալից վերաբերմունք դրսևորի տարբեր մշակույթների տարբերությունների, արժեքների և ձեռքբերումների նկատմամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ազգի՝ իր քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային համակարգի ընտրության և զարգացման իրավունքը:

III. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Սույն էթիկայի կանոնագրի դրույթների պահպանման ապահովումն իրականացվում է ներքին ինքնակարգավորման տարբերակով՝ էթիկայի կանոնագրի դրույթների պահպանման վերահսկողի (Օմբուդսմանի) միջոցով:

2. Օմբուդսմանը, հանդիսանալով անկախ անձ, համապատասխանելով անկողմնակալության և օբյեկտիվության բարձր չափանիշներին, պաշտոնի է

նշանակվում Ընկերության գլխավոր տնօրենի կողմից:

3. Օմբուդսմանին արգելվում է միաժամանակ համատեղության կարգով նշանակել Ընկերությունում որևէ այլ պաշտոնի:

4. Օմբուդսմանը հետևում է Հեռարձակողի գործունեության ընթացքում էթիկայի կանոնագրի դրույթների պահպանմանը, նպաստում է էթիկայի կանոնների խախտումների կանխարգելմանը և վերացմանը:

5. Օմբուդսմանն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է իրավահավասարության, անկողմնակալության, հրապարակայնության, թափանցիկության սկզբունքներով:

6. Օմբուդսմանի իրավասությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են Ընկերության գլխավոր տնօրենի կողմից հաստատված՝ էթիկայի կանոնգարի դրույթների պահպանման վերահսկողի՝ օմբուդսմանի, աշխատանքի նկարագրով՝ աշխատակարգով:

7. Օմբուդսմանն իր իրավասությունների իրականացման արդյունքում Ընկերության կողմից էթիկայի կանոնագրի պահանջների խախտման հայտնաբերման դեպքում կազմում է զեկույց, որը հրապարակվում է Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

Գլխավոր տնօրեն՝ _____ Ռուբեն Արամյան

«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ

Ք. Երևան 03 նոյեմբերի 2020թ.

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 07-Լ

«Ա-ԹԻՎԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԻ (ՕՄԲՈՒԴՍՄԱՆԻ) ՀԱՍՏԻՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԻ (ՕՄԲՈՒԴՍՄԱՆԻ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ա–ԹԻՎԻ» ՍՊԸ–ի (այսուհետ՝ Ընկերություն) գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 06-Լ հրամանով հաստատվել է Ընկերության էթիկայի կանոնագիրը,

Կարևորելով ներքին ինքնակարգավորման տարբերակով էթիկայի կանոնագրի դրույթների անկողմնակալ և արդյունավետ պահպանմանն ուղղված միջոցառումների նախատեսման անհրաժեշտությունը,

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի պահանջով և դրա կիրարկումն ապահովելու նպատակով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 13-ին հրապարակված ուղեցույցով, ինչպես նաև Ընկերության Կանոնադրությամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել էթիկայի կանոնագրի դրույթների պահպանման վերահսկողի (Օմբուդսմանի) հաստիք:
2. Հաստատել էթիկայի կանոնագրի դրույթների պահպանման վերահսկողի (Օմբուդսմանի) աշխատանքի նկարագիրը՝ աշխատակարգը, սույն հրամանին կից հավելված 1-ով:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2021թ.-ի հունվարի 1-ից:

Գլխավոր տնօրեն՝ _____ Ռուբեն Արամյան

Հասցե
ՀՀ, քաղաք Երևան 0054, Եղվարդի խճուղի 1
Լիցենզիա N 166
հեռ. (+37460) 445 238
էլ. փոստ info@atv.am
www.atv.am

Address:
1 Yeghvard Highway, Yerevan, 0054, RA
License N 166
tel. (+37460) 445 238
email info@atv.am
www.atv.am

Հավելված 1
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ-ի
գլխավոր տնօրենի՝
2020թ.-ի նոյեմբերի 03-ի
թիվ 07-Լ հրամանի

«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ-ի Էթիկայի կանոնգարի դրույթների պահպանման վերահսկողի (Օմբուդսմանի) աշխատանքի նկարագիր՝ աշխատակարգ

Պաշտոն.	Էթիկայի կանոնագրի դրույթների պահպանման վերահսկող (Օմբուդսման)
Անմիջական ղեկավար	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ–ի գլխավոր տնօրեն

Պաշտոնի ընդհանուր նկարագիր

Օմբուդսմանն անկախ անձ է, որը վերահսկում է Հեռարձակողի և նրա աշխատակիցների կողմից էթիկայի կանոնագրի պահպանումը, նպաստում է էթիկայի կանոնների խախտումների կանխարգելմանը և վերացմանը:

Օմբուդսմանն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է իրավահավասարության, անկողմնակալության, հրապարակայնության, թափանցիկության սկզբունքներով:

Աշխատանքային գործառույթներ

1.Օմբուդսմանն էթիկայի կանոնագրի դրույթների պահպանման վերահսկողությունն իրականացնում է.

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաղորդումների ուսումնասիրության միջոցով,
2) սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրությունների միջոցով:

Օմբուդսմանի կողմից իրականացվող ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել Հեռարձակողի կամ նրա աշխատակիցների կողմից թույլ տրված էթիկայի կանոնների խախտումները, դրա հաստատման պարագայում՝ պարզել մեղավոր անձանց շրջանակը և համապատասխան տեղեկատվությունը ներկայացնել վերջիններիս պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին:

Ընկերության կողմից Էթիկայի կանոնագրով սահմանված դրույթների խախտման հաստատման դեպքում Օմբուդսմանն այդ մասին կազմում է զեկույց:

2. Ուսումնասիրություն իրականացնելիս Օմբուդսմանն օգտվում է սույն աշխատակարգով իրեն վերապահված բոլոր իրավասություններից, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կարող է դիմել Ընկերության Գլխավոր տնօրենին՝ պահանջվող հանձնարարականներ արձակելու նպատակով:

Օմբուդսմանի իրավասությանը վերապահված հարցերի քննարկման ընթացակարգ

1. Հեռարձակողի կամ նրա աշխատակցի կողմից թույլ տրված՝ Էթիկայի կանոնագրի դրույթների ենթադրյալ խախտումների վերաբերյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաղորդումները ենթակա են Օմբուդսմանի կողմից ուսումնասիրման, եթե դրանք ներկայացվել են Էթիկայի նորմի ենթադրյալ խախտումից հետո 31 /երեսունմեկ/ օրվա ընթացքում:

2. Հաղորդում ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պարտավոր են՝

1) նշել Էթիկայի կանոնը, որն, իրենց կարծիքով, խախտվել է,

2) շարադրել Էթիկայի կանոնի ենթադրյալ խախտման արտահայտման նկարագիրը,

3) հիմնավորել Էթիկայի կանոնի ենթադրյալ խախտմամբ իրենց համար առաջացած անբարենպաստ հետևանքները:

3. Անստորագիր և անանուն հաղորդումները ենթակա չենՕմբուդսմանի կողմից ուսումնասիրման:

4. Այլ անձի իրավունքների խախտման կամ այլ անձի համար առաջացած անբարենպաստ հետևանքների վերաբերյալ հաղորդումները ենթակա չեն Օմբուդսմանի կողմից ուսումնասիրման, բացառությամբ անձի ներկայացուցչի կողմից ներկայացված հաղորդումների:

5. Հաղորդումը ստանալուց անմիջապես հետո Օմբուդսմանը սույն աշխատակարգով սահմանած կարգով պարտավոր է՝

- իրականացնել հաղորդման ուսումնասիրություն,

- ուսումնասիրման ենթակա հարցերի վերաբերյալ 3-օրյա ժամկետում տեղեկացնել Ընկերության ղեկավարությանը և աշխատակազմին, մասնավորապես նաև՝ այն անձին, ով հանդիսանում է էթիկայի կանոնի ենթադրյալ խախտողը,

- փաստաթղթերի և այլ տեղեկատվության հիման վրա ստուգել ստացված հաղորդման մեջ նշված հանգամանքների հավաստիությունը և կայացնել եզրակացություն,

- եզրակացությունը քննարկել Հեռարձակողի ղեկավարության հետ և կազմել վերջնական զեկույց:

6. Օմբուդմանի կողմից հաղորդման քննության առավելագույն ժամկետը 2 /երկու/ ամիս է:

7. Օմբուդսմանը հաղորդման քննության արդյունքում Ընկերության կողմից էթիկայի կանոնագրով սահմանված դրույթների խախտման հաստատման դեպքում կազմում է զեկույց և այն հրապարակում է Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

8. Եթե Օմբուդսմանի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում չի հաստատվում Ընկերության կողմից թույլ տրված՝ էթիկայի կանոնագրով սահմանված դրույթների խախտում, սակայն Հեռարձակողի աշխատակիցների գործողություններում հայտնաբերվում են էթիկայի կանոնների խախտման հատկանիշներ կամ դրանց նպաստող հանգամանքներ, ապա այդ մասին տեղեկատվությունը Օմբուդսմանը ներկայացնում է տվյալ աշխատակիցներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին՝ վերջիններիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը որոշելու նպատակով:

Օմբուդսմանի իրավասությունները

1. Օմբուդսմանն իր իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում և իր գործունեությունն իրականացնելիս իրավասու է՝

1)ընդունելու և քննարկելու յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի հաղորդումը Հեռարձակողի կամ նրա աշխատակցի կողմից թույլ տրված՝ Էթիկայի կանոնագրի դրույթների ենթադրյալխախտումների վերաբերյալ,

2) իր նախաձեռնությամբ իրականացնելու դիտարկումներ, մշտադիտարկումներ՝ Էթիկայի կանոնագրի դրույթների պահպանման վերահսկման նպատակով,

3) Էթիկայի կանոնագրի դրույթների հիման վրա մշակելու ուղեցույցներ,

4) հանրային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հանդես գալու հայտարարություններով:

2. Օմբուդսմանն իր ուսումնասիրությունն իրականացնելիս իրավասու է՝

1) անարգել այցելելու Հեռարձակողի ստորաբաժանումներ,

2) Հեռարձակողից կամ նրա աշխատակիցներից ստանալու հաղորդմանը կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող՝ Օմբուդսմանի գնահատմամբ անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ, ստանալու դրանք այդ թվում նաև էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով,

3)Հեռարձակողից կամ նրա աշխատակիցներից ստանալու ուսումնասիրությանշրջանակներում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, ստանալու դրանք այդ թվում նաև էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով:

Գլխավոր տնօրեն՝ Ռուբեն Արամյան